**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի <<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Ելնելով ազգաբնակչության սպասարկման բարելավման պայմաններից և հիվանդների սպասարկումը հարմարավետ և դյուրին դարձնելու պահանջներից, սահմանվում է պարտադիր պայման՝ մատակարարումը լինի դեղատնից՝ <<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում (գ. Մարմարաշեն, գ.Արևաբույր, գ.Ջրահովիտ,գ.Նոր Կյուրին) կամ սահմանակից համայնքներում:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում ՄՄԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14-2:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աճառյան փողոց, Արտաշատի թիվ 5 հիմնական դպրոցում, մինչև 2014թ.-ի հոկտեմբերի 8-ը, ժամը՝ 10:00-ը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աճառյան փողոց, Արտաշատի թիվ 5 հիմնական դպրոցում, 2014թ.-ի հոկտեմբերի 8-ին, ժամը 10:00:

Գնման առարկա է հանդիսանում <<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայք և պատվաստանյութերի ձեռք բերումը:

<<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայք և պատվաստանյութերի (15 չափաբաժիններից կազմվծ) տեխնիկական բնութագրերը, գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերին կից (Հավելված 3):

Մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաստատված, համապատասխանաբար մեկ բնօրինակ և երկու պատճեններից կազմված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի գնումների մասով էլեկտրոնային փոստի հասցեն է՝ specialist_pp@bk.ru:

**Հարգանքով՝**

**Տնօրեն՝** **Հ. Բասենցյան**